ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 24-28-Ը ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք.ԹԵՀՐԱՆ)
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը՝**

Արմեն Սիմոնյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

2025թ. Փետրվարի 24-28-ը Իրանի Իսլամական Հանրապետություն (Ք.Թեհրան)

4. **Հրավիրող կողմը.**

«ՏՐԱՍԵԿԱ» մշտական քարտուղարության Գլխավոր քարտուղար Ասսետ Ասսավբաև և Իրանի Իսլամական Հանրապետության ճանապարհների և քաղաքաշինության նախարար Ֆարզանեհ Սադեղ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Նպատակը՝ մասնակցելու փետրվարի 25-26-ին Թեհրանում կայանալիք «ՏՐԱՍԵԿԱ» Միջկառավարական հանձնաժողովի 17-րդ նիստին:

Փետրվարի 27-ին նախատեսված Ղազախստան-Թուրքմենստան-Իրան-Հայաստան տրանսպորտային միջանցք ստեղծելու նախագծի շուրջ հանդիպումները չեղարկվել են:

6. **<u>Քննարկված թեմաները.</u>**

Քննարկվել են ֆինանսական, ինստիտուցիոնալ, իրավական, հայեցակարգային մի շարք հարցեր, որոնք կարևոր են Եվրոպա-Կովկաս-Ասիա միջազգային տրանսպորտային միջանցքի (ՏՐԱՍԵԿԱ) հետագա զարգացման և դրա մրցունակության բարձրացման համար, ինչպես նաև օրակարգում ներառված այլ հարցեր:

Նիստի արդյունքում ընդունվել են որոշումներ, որոնք առնչվել են 2025 թվականի բյուջեի կատարման համար աուդիտի խումբ, հիմնադրամ ստեղծելու, Լատվիայի Հանրապետությանը «ՏՐԱՍԵԿԱ» դիտորդի կարգավիճակ տալու, Հունաստանի Հանրապետության դիտորդի կարգավիճակը երկարաձգելու, որոշ փաստաթղթերում փոփոխություն կատարելու և մի շարք կարևոր հարցերի վերաբերյալ:

Ելույթով հանդես եմ եկել «Խաղաղության խաչմերուկ» ՀՀ կառավարության կողմից նախաձեռնության վերաբերյալ՝ ներկայացնելով տրանսպորտային կապուղիները, դրանց զարգացման հեռանկարները և այլն:

7. **<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>**

ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Հակոբյանի հետ միասին հանդիպումներ են տեղի ունեցել ԻԻՀ ճանապարհների և քաղաքաշինության նախարար Ֆարզանեհ Սադեղի և նախարարի տեղակալ Ռեզա Ակբարիի հետ:

Քննարկվել են երկու երկրներում բեռնատարներից գանձվող ճանապարհային հարկերը փոխադարձ նվազեցնելու և/կամ չեղարկելու հարցերը: Որոշվել է հետագայում հանդիպում կազմակերպել և քննարկել գանձվող ճանապարհային հարկերի երկուստեք արտոնություններ տրամադրման հնարավոր տարբերակների վերաբերյալ:

Ինչպես նաև քննարկվել են ավտոմոբիլային բեռնափոխադրումների թվայնացման, մասնավորապես՝ e-CMR բեռնագրերի կիրառման հետ կապված հարցեր:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ստորագրված փաստաթղթեր առկա չեն :

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը

05.03.2025